# Սիրում է մրցել

## Այդ է պատճառը, որ ընտրել է շախմատը



Կարեն Ասրյանը շախմատ սկսել է խաղալ չորս տարեկանից: Յոթ տարեկանից մասնակցել է մրցաշարերի: Նվաճել է մինչեւ 10 տարեկանների Հայաստանի՝ ինչպես նաեւ ԱՊՀ երկրների նույնանուն մրցաշարի չեմպիոնի կոչումը: Աշխարհի առաջնության պատանի շախմատիստների մրցանակակիր է: Ինը տարեկանում դարձել է վարպետության թեկնածու: Տասնչորս տարեկանում միջազգային կարգի վարպետ էր, իսկ տասնյոթ տարեկանում ստացած միջազգային գրոսմեյստերի կոչմանը հաջորդել են բազմաթիվ մրցանակներ: Վերջինը՝ 2004թ. Տիգրան Պետրոսյանի անվան միջազգային մրցաշարում 1-ին մրցանակն էր: «Առաջին հերթին տաղանդ, աշխատասիրություն, նվիրվածություն՝ ահա լավ շախմատիստ դառնալու համար անհրաժեշտ նախապայմանները»,-ասում է երիտասարդ շախմատիստը: Նրա կարծիքով՝ շախմատը զարգացնում է անձի տրամաբանությունը, հոգեբանությունն ու մտածելակերպը: «Շախմատիստների միջավայրում լավ մարդիկ ավելի շատ են հանդիպում: Շախմատն ինձ օգնում է՝ լավ ընկերներ ձեռք բերել: Բացասականն այն է, որ այլ բաներով զբաղվելու համար շատ քիչ ժամանակ է մնում: Եթե ուզում ես լավ շախմատիստ դառնալ, պետք է շատ բաներից զրկվես»: Կարենը արտասահմանում աշխատելու հրավերներ հաճախ է ստանում. «Եթե ցանկանայի, մինչեւ հիմա կգնայի, բայց այստեղ իմ ընտանիքն է, ծնողներս: Ես շատ եմ կապված Հայաստանին, եւ հետո շախմատը իմ երկրում ավելի զարգացած է, քան այլ երկրներում: Տիգրան Պետրոսյանով սկսվել են մեր հաղթանակները, մենք էլ փորձում ենք շարունակել»:

Երիտասարդ շախմատիստի համար խաղի ժամանակ ամենավատ հարվածն այն է, երբ մի քայլից որոշվում է ամեն ինչ. «Կարող ես ամբողջ խաղը լավ անցկացնել, հետո՝ մի քայլով զրկվել ամեն ինչից: Երեւի լավ խաղացողը նա է, ով կարողանում է պարտությունը հեշտ տանել: Անձամբ ես այնքան էլ շուտ չեմ հաշտվում այդ վիճակի հետ»:

Սիրում է աշխարհի բոլոր շախմատի չեմպիոններին, հատկապես Խոսե Ռաուլ Կասաբլանկային եւ Գարրի Կասպարովին: Շախմատը սիրում է, որովհետեւ սիրում է մրցել:

«Չեմ կարող ասել, թե մեծ արդյունքների եմ հասել, ուղղակի յոթ տարեկանում նպատակս էր, որ դառնամ լավ շախմատիստ, միջազգային գրոսմեյստեր, Հայաստանի չեմպիոն, հիմա նպատակներս ավելի մեծ են, օրինակ՝ դառնալ աշխարհի օլիմպիական խաղերի չեմպիոն»: Նրա համար շախմատը եւ մասնագիտություն է, եւ վաստակելու միջոց: «Այն ժամանակ, երբ զգամ, որ ժամանակս ու աշխատանքս իզուր չի անցել, հասել եմ նպատակներիս, միգուցե մտածեմ շախմատը թողնելու մասին»:

*Իրինա Օսյան*